

որը դուրս դալով կասի: «Եթէ դու ինձ վրայ թքում ես, այդ դէպքում» ես թքում եմ քեզ և ամեն բանի վրայ էլ: Այո՛, այդ ձևով ընդունող եպիսկոպոսի համար նոյն է՝ քահանան իւր ամբողջ կեանքը հօտին ու Աստուծուն է նուիրում, թէ իւր ստամոքսին: Բայց ո՞ր ժամանակն է աւելի կարելի ունեցել բարձր կանգնած հոգևորականութեան քան մեր օրերը: Եթէ ինձ հարցնեն, թէ ինչո՞ւ է պահպանւում խղճուկ Ռուսաստանը, ես համոզմամբ կը կրկնեմ ինչ որ միշտ ասել եմ. «միայն այն խեղճ, ստորացրած և անպատուած զիւղական քահանաներով, որոնց սրբազանը ընդունում է նախասենեակում: Իսկ այդպիսի եպիսկոպոսն իւր վատ վարմունքով դէպի քահանաները, նպաստում է խռովութեան սաստկանալուն և եկեղեցու քայքայման:

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Ինձ անծանօթ մէկը՝ «РҮСЬ» թերթի միջոցով դիմում է ինձ խնդրելով բացատրել, թէ ի՞նչպէս է նայում ուղղափառ եկեղեցին մահուան պատժի վրայ:

Գոհութեամբ կատարում եմ նրա խնդրքը: Ակզբից դիտողութիւն եմ անում. ես չգիտեմ այդպիսի մի որոշումն, որով մեր եկեղեցին ուղղակի և բացորոշ արտայայտած լինի մահուան պատժի նկատմամբ իւր հայեացքը: Նա չէր կարող ասել սուտը, իսկ ճշմարիտը ասել նրան չէ թոյլատրում սինօդի ամենագօրեղ կազմը: Եկեղեցին լռում էր և մինչև օրս էլ լռում է: Այդ պատճառով՝ ընականաբար, ես կը խօսեմ միայն այն մասին, թէ ինչպէս կարող է նայել ուղղափառ եկեղեցին մահուան պատժի վրայ: Կարճ կը խօսեմ.

1)• Եկեղեցու վարդապետութեան համաձայն կեանքը Աստուծոյ պարգևն է, այդ պատճառով, բացի Աստուծուն, ոչ ոք չի կարող, իրաւունք չունի այն մարդուց խլելու:

2)• Փրկիչը աշխարհ եկաւ ոչ թէ արդարներին լիւրկելու, այլ մեղաւորներին ապաշխարութեան կանչելու համար. ապաշխարելու խօսքով նա դառնում էր ամենքին, նոյն իսկ ամենածանր յանցաւորներին, համայնքի մէջ ամենից արհամարհուածներին—անառակներին և մաքաւորներին: Եկեղեցին չի էլ ճանաչում այն ատիժանի մեղաւորութիւն մարդու մէջ, երբ նա անընդունակ դառնար ապաշխարելու. միայն դէն է ապաշխարելու անընդունակ:

Ուրեմն մահուան պատիժը ենթադրում է մարդու մէջ

ապաշխարելու անհնար լինելը, այսինքն դե լինելու սկիզբը և ոչ Աստուծոյ պատիւեր, որ հայհոյանք է Աստուծոյ Որդուն: Իսկ եթէ այդ չէ ենթադրում, այն ժամանակ յանցաւորին զրկում է մնացորդ կեանքում ապաշխարելու հնարաւորութիւնից: Զէ՞ որ մահուան դատաւճիռ ստորագրողներին տուած չէ իմանալ, թէ որ յանցաւորը ապրելով չի ապաշխարել և չի ուղղել:

3). Եկեղեցին չի կարող՝ թէկուզ որեւիցէ բարոյական խորհուրդ տեսնել մահուան պատժի մէջ: Ի՞նչ է այն:

Ա. Յանցաւորին պատժել: Սակայն եկեղեցին չէ ճանաչում ոչլ պատիժներ, բացի Աստուծոյ պատիժներից. իսկ մարդուց մարդուն պատիժ և այն էլ մահուան պատիժ—այդ յաւիշտաւորութիւն է մարդուն չքաւած իրաւունքների:

Բ. Ուրիշներին սարսափեցնելու համար: Բայց համայնքը կարո՞ղ է ընդունել այդպիսով բարոյադիտութիւն:

Զաւաղանց թանկ գնով է ձեռք բերուում այն: Այն արեան դին է: Եւ արդ կըսարսափեցնէ՞ արդեօք մէկին այդ պատիժը: Գուցէ միայն նրանց, որոնք առանց այն էլ երբէք չեն անիլ այն, որի համար մահուան պատժի են դատապարտում: Ուրիշի ձեռքից արիւն—այդ նահատակութիւն է, իսկ նահատակութիւն ծնում է իրեն սերունդ: Վաղուց յայտնի է, որ քրիստոնեայ նահատակների արիւնը սաղմ է քրիստոնէութեան:

Քաղաքական յանցանքի համար նահատակողների արիւնը—ուրեմն սաղմ է բարգաւաճման այն դադափարների, որոնց համար թափուում է մարդկային արիւն: Մեր ժամանակի փաստերը ամենալաւ կերպով հաստատում են այդ:

Գ. մահուան պատիժը վրիժառութիւն է յանցանքի փոխարէն. ո՞ւմնից, կառավարութեան կողմից. սակայն մի՞թէ նա վրիժառութեան համար է և ո՞չ ուղղելու: Հաւարակութեան կողմից, որին վնասում են յանցաւորները. բայց մի՞թէ այդ քրիստոնէական զգացմունք է: Մի՞թէ վրիժառութիւն սովորեցրեց նա, Որի անունը կրում է ռուս ժողովուրդը, անուանելով իրեն «խաչակիր» այսինքն քրիստոնեայ:

4). Թէ ինչպէս էր վերաբերուում Փրկիչը մահուան պատժին, եւ մտաբերում եմ հետեւեալ աւետարանական իրողութիւնը:

Մի անգամ, ինչպէս պատմում է Յովհաննէս աւետարանիչը Ը-րդ գլխում, դպիւնները և փարիսեցիները Յիսուս—Քրիստոսի մօտ բերին մի Գին, որին բռնել էին անառակութեան մէջ: «Վարդապետ, հարցնում էին նրան—այս Գինը բռնուած է պոռնիկութեան մէջ և Մովսէսը օրէնքով պատուիրում է այդ—

պիսիւններն քարկոծել: Դու ի՞նչ կասես: Ի՞նչ ասաց Քրիստոս:

Սրգարացնել այդ տետակ կնոջը, թէկուզ մարդկային թու-
լութեան համար, անկարելի էր, ի նիւտի ունենալով օրէնքի
այդ մասին արած ուղիղ և դրական պահանջը (ՂԼա. 20, 10 և
օրինաց 22, 23—29): Մեղքն էլ անկարելի է ժխտել ակնյայտ
լինելու պատճառով. կինը բռնուած էր պոռնիկութեան վայր-
կենին: Ուրեմն քարկոծել նրան. մե՞հ նրան:

Բայց Յիսուս, խոնարհ նայելով գրում էր գետնին և յետոյ
պատասխանեց հարց տուողներին. — «անմեղն ի ձէնջ՝ նախ նա
ընկեսցէ քար ի վերայ դորա». նա խոնարհութեամբ ասաց մի-
այն մի քանի հասարակ խօսք, բայց այդ խօսքերը եղիպի հան-
դարտ ձայնի նման մառախուղից կամ երկրաշարժից ահարկու-
էին: Նրանք կայծի նման ընկան թմրած սրտերի մէջ և սկսեցին
այրել նրանց, մինչև որ նրանց մէջ բորբոքուեց տանջուած
խիղճը:

Դպիրներն ու փարիսեցիները կանգնած էին լուռ և սար-
սափահար. նրանց ձեռքերը ակամայ բաժանուեցին կնոջից և
խորամանկութեամբ, ու չարութեամբ լի յանդուգն հայեացք-
ները բթացան, ինչպէս յանցաւորներինը» (Փարբար): Փրկչի
լուռ պատասխանը շօշափեց հպարտ դատաւորների սրբութիւն
սրբոցը. նա հարկադրեց նրանց նայել իրանց հոգուն: Այո՛, ահա
նրանք մեղադրում են, դատապարտում են մեղաւոր կնոջը
մահուան պատժի. նա անպայման մեղաւոր է, իսկ իրանք ան-
մեղ են. նրանց խիղճը ոչինչ չէ՞ ասում իրենց, չի՞ դատապար-
տում իրենց: Յանցանքի համար կնոջը մահուան դատապար-
տելով, մի՞թէ նրանք պարտաւոր չեն խղճի ձայնով իրենց մօ-
տեցնել կնոջը և. . . նոյնպէս դատապարտել:

Դուքէ այժմ նրանք անմեղ են. ոչինչ, սակայն կարող են
երաշխաւորել, որ ապագայում էլ չեն մեղանչիլ: Ով կարող է
երաշխաւորել, երբէք նման մեղք չի գործել, ով ամենակատա-
րեալ անմեղ է (անումարտեառ), թո՛ղ նա առաջինը քար ձգէ:

Եւ կարելի՞ է մէկը իրեն ընդորովին մեղքի և ուրիշի յան-
ցանքին անմասն համարէ: Միշտ արդեօք ուրիշների վերաբե-
րութեամբ անկեղծ ու արդար է եղել. արդեօք միշտ ազնիւ և
անկաշառ է եղել, որպէս զի զգայուններին չըզրդուէ դէպի
անարդարութիւն: Արդեօք միշտ արել է եղբօր համար այն,
ինչ իրեն է ցանկացել: Ո՞վ կարող է ասել՝ որ մեղսահից չէ իւր
մերձավորի մեղսալից կեանքին, յանցանքներին և պակասու-
թիւններին. և ձեռքերը լուանալ: Մանաւանդ մեր մռայլ,
ճնշուած, անկեղծ և մեղսալից Ռուսիայում: Եւ որովհետեւ—

«այդ ոչ ոք չի կարող ասել իւր մասին, մանաւանդ մտածել», ուրեմն նշանակում է իրաւունք չունի քար ձգել և զրկել նորոգութելու, արդարանալու ու սրբութելու հնարաւորութիւնից: «Ով կին, ո՛ւր են քեզ մեղադրողները, «ոչ ոք չըմեղադրէ՞ց քեզ»։ Նա պատասխանեց.— «Տէ՛ր, ոչ ոք»։ Յիսուս ասաց նրան.— «Ես էլ չեմ դատապարտում քեզ, դնա՛ և այլևս չըմեղանշես»:

Փրկչի այդ բազմաբովանդակ խօսքը պատասխան է բոլորին, որոնք կամենում են իմանալ եկեղեցու հայեացքը մահուան պատժի մասին:

— «Գնա՛ և այլևս չըմեղանշես» — միայն այդ կարող է մեղաւորին պատիժ որոշել:

Մ. Քահ. Զեյցով.

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

«Taigliche Rundschau» թերթի Հռոմի թղթակիցը հաղորդում է մի քանի տեղեկութիւններ ներկայ պապի վատիկանում մտցրած խնայողութեան մասին: Հակառակ իւր նախորդի որը թէ՛ և անձամբ չափաւոր կեանք էր վարում, բայց միջոցներ չէր խնայում իւարթամ՝ զուտ արքայական սարք ու կարգի բազմաթիւ պալատական պաշտօնէութեան վրայ, Պիոս X իւր բուրժուազական սովորութիւններով զանազան ներկայացուցչութեան մասին շատ չի հոգում և որտեղ միայն հնար է կրճատում է իւր տնտեսութեան ընդարձակ ծախսերը և խնայողութիւն մտնում: Բացի անձնական ճաշակից՝ խնայողութեան հարկադիր հանգամանքն այն է, որ Ֆրանսայից ստացուող եկամուտներն այսուհետև հաւանականաբար կրճատուելու են, մինչդեռ «ս. Պետրոսի լուման» ամենից շատ Ֆրանսիայից էր ստացւում:

Լեոն XIII պապը իրեն հաւատարիմ ազնուականներին պաշտպանելու համար իւր ժամանակին դրամական նպաստներ էր տուել այն մի քանի ընտանիքներին, որոնք վնասուել էին Բօրգեզէ և Պիօմբինօ բանկերի սնանկանալուց: Պիոս X հրամայեց յիշեցնել պարտապաններին իրենց պարտքը և առաջարկել, որ վճարեն: Խնայողութեան նպատակով պապը վճռեց զգալի կերպով քչացնել դպրոցների թիւը, որոնք մեծ թուով բացուել և պահւում էին Հռոմում պետական և քաղաքական «անհաւատ» դպրոցների հետ մրցելու և որոնց պահպանութիւնը 1 միլիոն ոսկի էր նստում: Ծախսերի կրճատման նպատակով վեր-